ՀՀ ՕՐԵՆՔԸ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Անձին հաշմանդամ են ճանաչում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունը և տարածքային բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովները (ԲՍՓՀ):

- Բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացնում է փորձաքննվողի հաշվառման կամ փաստացի բնակության վայրը սպասարկող հանձնաժողովը:
- Անձի բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացվում է հանձնաժողովի նախագահին ներկայացված՝ անձի կամ նրա ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա՝ ներկայացնելով անձի անձնագիրը: Եթե դիմումատուն ներկայացուցիչն է, ապա ներկայացնում է նաև իր անձնագիրը:

Մինչև 16 տարեկան երեխաների համար ներկայացվում է ծննդյան վկայականը, ծնողներից մեկի կամ խնամակալի (հոգաբարձուի) անձնագիրը, իսկ 16-18 տարեկան երեխաները դիմումը գրում են անձամբ՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:

- 18 և բարձր տարիքի անձանց բժշկասոցիալական փորձաքննության է ուղեգրում բժշկափորձագիտական հանձնաժողովը (ԲՓՀ), իսկ հանձնաժողովի բացակայության դեպքում ուղեգրումն իրականացվում է բժշկական հաստատության տնօրենի և բուժող բժշկի կողմից:
- Բուժող բժշկի (ընտանեկան բժիշկ, տեղամասային թերապևտ, նեղ մասնագետ) կողմից լրացվում է ,18 և բարձր տարիքի անձի բժշկասոցիալական փորձաքննության ուղեգիր (Ձև N 088)ե:
- Մինչև 18 տարեկան երեխային ,հաշմանդամ երեխաե կարգավիճակի տրման համար փորձաքննության ուղեգիրը (Ձև N 088-1) լրացվում է համապատասխան հիվանդանոցային բուժհաստատության, մասնագիտացված կենտրոնների կամ դիսպանսերների (բաժանմունքների) կողմից:

Անձը համարվում է հաշմանդամ մինչև բժշկասոցիալական փորձաքննական որոշման մեջ նշված ժամկետին հաջորդող ամսվա 1-ը:

- Հաշմանդամ ճանաչված 18 տարին լրացած անձին տրվում է հաշմանդամության խումբ (1-ին, 2-րդ կամ 3-րդ), իսկ մինչև 18 տարեկան երեխաներին «հաշմանդամ երեխա» կարգավիճակ:

1-ին խմբի հաշմանդամությունը սահմանվում է երկու տարի ժամկետով:

2-րդ և 3-րդ խմբերի հաշմանդամությունը սահմանվում է մեկ տարի ժամկետով:

«Հաշմանդամ երեխա» կարգավիճակը սահմանվում է երկու տարի ժամկետով կամ մինչև անձի 18 տարին լրանալը:

Հաշմանդամության խումբը սահմանվում է անժամկետ

- օրենքով տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձանց,
- վերականգնողական միջոցառումների հեռանկարի բացակայության, հաշմանդամի սոցիալական անբավարարության վերացման կամ նվազեցման անհնարինության դեպքերում,
- իրականացված վերականգնողական միջոցառումների անարդյունավետության դեպքում,
- մեկ ականագնդի կամ մեկ աչքի տեսողության անվերադարձ բացակայության դեպքում:

Հեռակա փորձաքննության արդյունքում հաշմանդամությունն անժամկետ չի սահմանվում:

Լրացուցիչ տեղեկություններ համար զանգահարել Պաշտպանի թեժ գիծ 116 և Հայկական Կարիտասի «Տեղեկատվական և աջակցման կենտրոն»՝ 0 8000 10 11 հեռախոսահամարներով: